

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել հանդիպում ՀՀ Կոտայքի մարզպետին առնչված երիտասարդական խորհրդի հասարակական հատվածը ներկայացնող երիտասարդների հետ: Տարբեր երիտասարդական հասարակական կազմակերպություններ ներկայացնող երիտասարդների հետ համատեղ քննարկվել են մարզի երիտասարդների առօրյայի աշխուժացմանը, նրանց ստեղծագործ և մտավոր ներուժի բացահայտմանն ու երիտասարդների հետ տարվող աշխատանքների հիմնական ուղղությունների մշակմանը վերաբերող հարցեր:

Երիտասարդական այս քննարկման օրակարգում են եղել նաև մարզի համայնքների երիտասարդությանը միավորող նախաձեռնությունների ու ծրագրերի իրականացմանը միտված մի շարք հարցեր:

Երիտասարդական հասարակական կազմակերպությունների պատասխանատուների առաջարկությամբ նմանատիպ հանդիպումները կրելու են պարբերական բնույթ:

01.09.2014 թ.